ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնք
ք.Վեդի, Թումանյան 6, +(374)60881111 vedimunicipality@gmail.com

ք.Վեդի 13. 07. 2023 թ.

« ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ » ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ
/ք. Երևան, Գային Պ 20 Շ 11/

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանի և « ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊ ընկերության միջև 5.05.2023թ. կնքված N ՀՀ ԱՄՎՀ-ԳՀԱՊՁԲ-23/09 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում, « ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊ ընկերությունը պետք է մատակարարեր 20 հատ կանգառասրահներ, որոնք չի մատակարարվել ընկերության կողմից: Մատակարարման ժամկետ է սահմանված պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո վաթսուն օրացույցային օր:Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.1 կետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի) և պայմանագրի 2.1.7 կետը՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Հիմք ընդունելով վերոգրյալը Վեդու համայնքապետարանը միակողմանի լուծում է պայմանագիրը՝պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված, «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանի 900425102093 հաշվեհամարին փոխանցել ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները/ տուժանքի մասին համաձայնագրեր՝ հավելված 4.2 և հավելված 5.1/ կից վճարման պահանջագրերի հետ միասին: Տուժանքի մասին համաձայնագրերը սահմանված կարգով կներկայացվեն ընկերությանը սպասարկող բանկ՝«Արդշինբանկ ՓԲԸ», տուժանքների մասով համաձայնագրերով սահմանված գումարները ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանի 900425102093 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը). հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

-սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

-մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**